ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 377

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Կարբի բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Աշտարակ համայնքի (Կարբի բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Կարբի բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի (Կարբի բնակավայրը) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
02-058-0348-0022 կադաստրային ծածկագրով 1.4154 հա մակերեսով (1.3426 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք, իսկ 0.0726 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր) հողամասից 0.3425 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք	02-058-0348-0022 կադաստրային ծածկագրով 1.4154 հա մակերեսով (1.3426 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք, իսկ 0.0726 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր) հողամասից 0.3425 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ շրջական միջավայրի և ՀՀ ներքին գործերի նախարարությունների կարծիքները (կցվում են):

4. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Կարբի բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Կարբի բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «18» «սեպտեմբերի» 2024թ.